Գիտե՞ք, որ...

ՆՈՐ ԳՈՒՅՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ

Սովորողների ուշադրությունը պետք է հրավիրել գունաներկերով տարբեր գունային երանգներ ստանալու գաղտնիքներին: Նրանք պետք է իմանան, որ հիմնական գույներն են կարմիրը, կապույտը, դեղինը, իսկ լրացուցիչ գույները ստանում են հիմնական գույների խառնուրդից: Ուշադրության կենտրոնում պետք է լինի այն, թե ինչպես են օգտվում գույներից, ինչպես են նկարում, օգտագործո՞ւմ են, արդյոք, փորձաթուղթ: Յուրացնելով գույների ստացման գաղտնիքները, հետագայում կարող են ստանալ տարբեր գույներ: Նրանք ազատ են գույների, գունաներկերի ընտրության մեջ:

Ստորև ներկայացնում ենք գունապնակի գույների խառնուրդից ստացվող նոր գուներանգները:

Այսպես՝

կարմիր + դեղին – նարնջագույն
կարմիր + սպիտակ – վարդագույն
կարմիր + կանաչ – շագանակագույն
կարմիր + սև – թուխ կարմիր
կարմիր + կապույտ – մանուշակագույն, ծիրանի

կապույտ + կանաչ – զմրուխտագույն
կապույտ + վարդագույն – յասամանի գույն
կապույտ + դեղին – կանաչ
կապույտ + սև – մուգ կապույտ
կապույտ + սպիտակ – բաց կապույտ

դեղին + կապույտ – կանաչ
դեղին + սև – թուխ
դեղին + վարդագույն – մարմնագույն

սպիտակ + դեղին – դեղնաշորթ
սպիտակ + կարմիր – որդան կարմիր
սպիտակ + կապույտ – մոխրագույն
սպիտակ + սև – մոխրաշաղ